Ա. ՎՌԱՄԵԱՆ

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԵՕԹԸ տարի անցաւ... Եւ ոչ մի վաւերական լուր մեր հարիւրաւոր մտաւորական գործիչներից, որոնք տարուեցան անօրինակ խորշակի թեւերի վրայ... դէպի մութ Անյայտութիւն:

Թիւրքական բարբարոսութիւնը, ինքզինքը գերազանցելով, յղացաւ ոճիրներից ամենահռելին,—

Նախ՝ կարել հայ ժողովրդի գլուխը եւ ապա՝ ջարդել անդամները...

Եւ գնացին նրանք հարիւրներով, զատզատ կամ խումբ-խումբ դէպի հեռու աքսորավայրեր:

Ուխտուածների կարաւանն էր, որ շարժուում էր... դէպի գերեզման: Ուխտուածների կարաւանը՝ աւազուտ անապատներում... եզակի մի տեսարան, աննախընթաց համաշխարհային պատմութեան մէջ: Եզակի, սրտաճմլիկ մի թափոր, որ գալիս էր ծանուցանելու աշխարհին, թէ ինչ դիւական զարհուրանքներ կարող է յօրինել օսմանեան սատրապների գանդը եւ թէ ինչքան սասանեցուցիչ մի ողբերգութիւն է հայ ժողովրդի այդ դաժան, այդ աղեխարշ նահատակութեան պատմութիւնը...

Ի՞նչ բանաստեղծ եւ ի՞նչ վրձին պիտի կարենայ երբ եւ իցէ պատկերացնել գաղափարային մարտիրոսների այդ թաղմանական թափորները. ի՞նչ քնար եւ ի՞նչ սրինդ պիտի կարենայ հնչեցնել զօղանջները նրանց անհուն, երկնաաղաղակ վշտի ու տանջանքի...

Աւա՜ղ, այո՛: Ցուսալ այսուհետեւ— ասել է յուսալ ընդդէմ ամէն հաւանականութեան, ընդդէմ ամէն յոյսի:

Lasciate ogni speranza!... Դանտէի աահաւոր խօսքն է գրուած թիւրքական մեծ դարպասի վրայ, ուսկից անցել են մեր սիրելի ընկերները, մեր հարիւրաւոր մտաւորականները իրենց տխուր ուղեւորութեան ճանապարհին:

Եւ մենք դանուում ենք մի անողոք հարկի դիմաց—



Ա. ՎԱՄԵԱՆ

Հաշտուել պաղ իրականութեան հետ եւ գրել նեկրոլոգներ եւ շարադրել կենսագրականներ:

Գրիչը երկար չի շարժուում... Վիշտը սեղմում է կուրծք ու կոկորդ եւ արցունքները խտանում են կոպերի տակ... Ինչպէ՞ս գրել, քանի՞ մէկը գրել...

Նստում եմ մեն-մինակ զուիցերիական մի գմայլելի լեռնախորշում: Շուրջս ամէն ինչ կեանք է բուրում, գեղեցկութիւն ու երջանկութիւն: Եւ իմ կոկորդը աւելի է սեղմուում, երբ մտաբերում եմ արտասուելի հակապատկերը այս չքնաղ երկրավայրի եւ մեր դժոխքիրականութեան: Ամբողջ օրեր թափառում եմ մտամոլոր եւ անկարող եմ գրիչ առնել ձեռքս ու թղթի վրայ դրոշմել այս անողոք վերնա-